



Ազդարարության Trumpet's Sound **փող**

48-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՅՈԿՏԵՄԲԵՐ 2017





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Խովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎստահությունՀովիվ՝ Հրաչ Գույունյան

Արդյոք Աստված բարի՞ է.....Ռեքս Տիրլավ

Հովհաննես Մկրտչի ծնունդը.....Դոն Սթորմըր

Հավատո՞ւմ եք ՀիսուսինՀովիվ՝ Րաֆֆի Զափարյան

Եբրայեցիներին ուղղված նամակը (բաժին 2, մաս 4)QMBC պանորամա

Ջիմին և անաստվածը.....Քաղված

Բարի լուրԽ. Գասպարյան

Հոգևոր տնտեսագիտության դասեր (5).....Մանկանց ավետ. ընկ.

Երեմիա՝ վարանող մարգարենԴոկտ. Չեալո Բասսարա

Ներգրավվածությամբ չենք կարող խաբել Աստծուն Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Հավատք՝ Քրիստոսի հանդեպ, սեր՝ եղբայրների հանդեպ.Վարդան Սարգիսեան

Որքա՞ն մեծ է քո Աստվածը.....Քաղված

Վստահություն

«Մի՞թե չեմ հրամայել քեզ՝ գորացի՜ր, քաջասի՜րտ եղի՜ր, մի՛ վախենա և մի՛ զարհուրի՜ր, քանի որ քո Տեր Աստվածը քեզ հետ է, ուր էլ որ գնաս» (Հեաու 1.9):

Շատ կարևոր հարց է, թե ում ենք վստահում:

Այսօրվա աշխարհում ուրիշին վստահելը բավականին դժվար է: Մարդիկ հրաժարվել են որևէ մեկին վստահելուց նույնիսկ ընտանիքի անդամներին:

Ոմանք միայն իրենց իմաստությանն ու գորությանն են վստահում, սակայն Աստվածաշունչը շատ հստակ է ասում. «Իր սրտին ապավինողն անմիտ է, բայց իմաստությամբ շարժվողը կազատվի» (Առակ. 28.26):

Կյանքը երբեմն ծանր և վախենալի կարող է դառնալ: Որքա՜ն խեղճ մարդիկ կլինեինք, եթե Տեր Հիսուսի հանդեպ հավատք և վստահություն չունենայինք:

Բնական աղետներ, պատերազմներ, վախեր, վստահության պակաս, ֆինանսական ճգնաժամներ, ընտանեկան քայքայված փոխհարաբերություններ, չքավորություն, անտնություն, սիրելիի կորուստ. ցանկը շատ երկար է: Թո՛ւյլ տուր քեզ մի հարց ուղղել. «Նեղության ժամանակ ո՞ւմ ես դիմում, ո՞ւմ ես վստահում՝ ոգելից խմիչքի՞ն, թըմբանյութի՞ն, թե՞ պարզապես հանձնվում ես և հեռու փախչում»:

Իսկ Հիսուսին փորձած կա՞ս:

Կյանքում բազմատեսակ իրավիճակներով անցա, երբեմն թվում էր, թե անհնար է առանց վնասների դուրս գալ, անհնար է դարձյալ ազատության մեջ գտնվել, ուրախություն ունենալ, սակայն Տերը հավատարիմ է Իր բոլոր զավակների նկատմամբ, ուստի դու էլ վստահի՜ր Իրեն, ամուր կառչի՜ր Նրան, երբեք մի՛ թող, որ հեռանա քեզանից, հույսդ մի՛ կորցրու, քանի որ Նա հավատարիմ Հայր է:

«Թագավորը չափազանց ուրախացավ նրա համար ու հրամայեց

Դանիելին գուրից դուրս հանել: Այսպես Դանիելը գուրից դուրս բերվեց, ու նրա վրա ոչ մի վնաս չգտնվեց, որովհետև Աստծուն էր հավատացել» (Դան. 6.23):

Այո՛, ես անցել եմ այնպիսի պարագաներով, ուր հույսի նշույլ անգամ չկար, սակայն Աստված Իր ձեռքերը մեկնեց և փրկեց ինձ: Ես այսօր փառաբանում եմ Նրան: Հիսուսը մեր միակ հույսն է, Նա է այն միակը, ով օգնության է հասնում, երբ խնդրում ենք Նրան: Ես այս խոսքերը գրում եմ սրտիս մեջ ուրախություն ունենալով, քանի որ իմ Փրկիչը կենդանի է: Ես կորած էի, առանց որևէ հույսի, սակայն Նա իմ սուգը պարի վերածեց:

«Արդ, հույսի Աստվածը թող ձեզ ամենայն բերկրությամբ ու խաղաղությամբ լցնի, ձեր հավատալով, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ հույսով առատանաք» (Հռոմ. 15.13):

Վստահի՛ր Հիսուսին անկախ քո պարագաներից և երբեք ամոթով չես մնա:

Հ. Գ.



Արդյոք Աստված բարի՞ է

Արդյոք հիանալի զգացում չե՞ այն զգացումը, երբ կյանքիդ մեջ մի բան ընթանում է ճիշտ այնպես, ինչպես նախատեսել էիր, նույնիսկ եթե երկար չի տևում: Երբ մեր զավակները քննությունները հաջող են հանձնում կամ իրենց երազած աշխատանքն են գտնում, երբ ընտանեկան ու եկեղեցական կյանքը խոստումնալից է և առողջական որևէ խնդիր չունենք, կարծես թե երջանկությունից ու երախտագիտությունից մեր դեմքը սկսում է փայլել: Մեր ծանոթներին ասում ենք. «Տեսա՞ք, որ Աստված բարի է»: Երբ Աստված մեր կողմից է և գործունյա կերպով մասնակցում է մեր առօրյա կյանքում, մեզ համար Իրեն շնորհակալություն հայտնելը ամենևին դժվար բան չի թվում:

Այնուամենայնիվ, եղել են պահեր, երբ սկսել են մտածել, թե ի՞նչ նկատի ունենք, երբ ասում ենք, թե Աստված բարի է: Պատկերացրե՛ք մի քրիստոնյա վարորդի, ով հագիվ խուսափել է մայրուղու վրա ճանապարհային լուրջ պատահարից: Այսպիսի պարագայում, իհարկե, ասում ենք, թե Աստված բարի գտնվեց նրա հանդեպ: Եթե զավակներին՝ քննությունները հանձնելը կամ ճանապարհորդության ժամանակ ապահով լինելը և առողջական խնդիրներ չունենալը ապացույցներ են, որ Աստված բարի է, ապա Աստծո մասին ինչպիսի՞ կարծիք կունենայինք, եթե զավակներս քննությունները հանձնելու մեջ ձախողվեին, կամ ճանապարհային պատահարի հանդիպեի, կամ առողջությանս հետ խնդիր ունենայի. արդյո՞ք սրանք ապացույցներ են, որ Աստված բարի չէ: Կարծում եմ, որ մարդկանց մեծամասնությունը այդպես կմտածեր: Կյանքիս վրա ակնարկ նետելով՝ հիշում եմ, որ եղել են պահեր, երբ ջերմեռանդությամբ աղոթել եմ մի հարցի շուրջ, որ կարծում էի, թե բարի և կարևոր է ինձ համար, բայց այդպես էլ անպատասխան եմ մնացել: Այդպիսի խավար պահերին սարսափելի բան է եզրահանգման գալը, որ Աստված իրականության մեջ այդքան էլ բարի չէ:

Բոլորս բնածին հակվածություն ունենք Աստծո մասին կարծիքներ կազմելու մեր կյանքի փորձից: Երբ կյանքը ժպտում է մեզ, ասում ենք, թե Աստված բարի է, երբ ամեն ինչ մեր դեմ է, ասում ենք, թե Նա այնքան էլ բարի չէ: Այն անձը, ով ասում է, թե Աստված բարի է, քանի որ կյանքում լավ բաների է հանդիպել, իր փորձառությունների լույսի ներքո Աստծո՝ ինչպիսին լինելու մասին կարծիք կազմելու վտանգի առջև է կանգնած: Երբ ողբերգության հանդիպի, նա կա՛մ ստիպված կեզրակացնի, թե Աստված բարի չէ, կա՛մ էլ իր կյանքում անկյունադարձ կունենա և կտվորի, թե իրականության մեջ ինչպիսին է Աստված:

Կյանքի նկատմամբ այս ոչ աստվածաշնչային մոտեցման խնդիրն այն է, որ Աստծուն ներկայացնում է որպես փոփոխական անձի, որի քայլերը ենթակա են փոփոխության՝ ըստ մեր ապրած կյանքի իրավիճակների և ձեռք բերած փորձառության: Նա կարծես թե բարի է, երբ կյանքը լավ է, և բարի չէ, երբ կյանքը վատ է: Ո՞վ է ուզում այսպիսի Աստված ունենալ: Մենք կարիք ունենք այնպիսի Աստծո, ով անփոփոխ է, անկախ նրանից, թե տվյալ ժամանակի մեջ կյանքի ինչպիսի

իրավիճակներով ենք անցնում կամ ինչպիսի փորձառություններ ենք ձեռք բերում:

Թերևս դժվար է թվում հավատալիքներիդ վրա հաստատ մնալը, երբ կյանքը քո չուզած ձևով է ընթանում, սակայն ավելի դժվար է այնպիսի Աստծո հետևելը, որի որոշումները պայմանավորված են կյանքում մեր վերապրած փորձառություններով:

Աստծո մասին մեր փորձառություններին հիմնվելով գաղափարներ կազմելու փոխարեն, Աստված հրավիրում է մեզ, որ մեր փորձառությունների մեջ սովորենք Իրեն հենվել, և այդ ժամանակ կբացահայտենք այն, ինչ մեզ համար անհասկանալի էր ու կտեսնենք, թե Նա մեր պատկերացրածից ավելի բարի է:

Մինչ Հոբբը չարչարանքերի մեջ էր, սովորեց, որ կյանքում ինչ էլ պատահի, Աստված բարի էր և արժանի երկրպագության: Առաջին հարվածի ժամանակ կարծես թե այսպիսի արտահայտություն անելը չարչարվող անձի կողմից անսովոր բան լիներ: Սակայն սրանում է բժշկությունը: Հոբի վերականգնվելու առաջին քայլն այն էր, որ Հոբբը հասկանար որ Աստված միշտ բարի է և արժանի երկրպագության: Նույնը նաև կարելի է ասել մեզ համար: Աստծուն Իր բարության համար երկրպագելը պետք է լինի այն հզոր զենքը, որը օգտագործելու ենք կյանքի ելևէջների ժամանակ: Այն մեզ պաշտպանում է թե՛ վատ, թե՛ լավ օրերում: Լավ օրերի ժամանակ Աստծուն Իր բարության համար երկրպագելը մեզ խոնարհեցնում է, այն ամեն բանից և ամեն անձից ավելի Իրենից կախյալ լինել է սովորեցնում: Վատ օրերի ժամանակ Աստծուն երկրպագելը մեզանից ցավը չի հեռացնի, հապա մեր ոտքերի համար ապահով գետին կստեղծի, որտեղ մենք պաշտպանված կզգանք ու ավելի իմաստությամբ կկարողանանք անցնել կյանքի այդ խրթին իրավիճակների միջով:

Անասաա՛ն եղիր: Աստված միշտ բարի է:

Քաղված՝ Ռեքս Տիրլավի
«Աստված միշտ բարի է» գրքից

Հովհաննես Մկրտչի ծնունդը

Ղուկաս 1.57-80

Չաքարիայի պատմությունը ավարտվում է: Թեև Չաքարիան չհավատաց հրեշտակի պատգամին, սակայն Աստված պատվեց Իր խոստումը, և Հովհաննեսը ծնվեց: Հարևաններն ու հարազատները հավաքվել էին երեխայի թվատության միջոցառմանը և նախատեսում էին նրան իր հոր անունով կոչել: Եղիսաբեթը, իմանալով, թե հրեշտակն ինչ էր ասել, հայտարարեց, որ նրա անունը Հովհաննես է: Սրանում տեսնում ենք նրա հաստատակամությունն ու խիզախությունը, չնայած որ հարևաններն ու ազգականները այլ բան էին ծրագրում:

Այն, ինչ տեղի է ունենում դրանից հետո, ցույց է տալիս, որ Չաքարիան, համը դառնալով, միգուցե նաև խլացել էր: Մարդիկ ստիպված էին նրա հետ նշաններով խոսել, որպեսզի իմանային, թե ինչպես է ուզում որդուն անվանել: Նա պատասխանեց նրանց՝ տախտակի վրա գրելով Հովհաննես անունը: Նրա խոսելու ունակությունն այնուհետև վերականգնվեց այնպես, ինչպես հրեշտակն էր ասել:

Չարմանալի է, թե այսպիսի մի իրադարձություն որքան արագ է մոռացվում: Մարդիկ հստակ տեսել էին Աստծո ձեռքը այս պատմության մեջ և իրենց սրտերում երկար պահել էին կատարվածի հիշողությունը: Այնուամենայնիվ, թվում է, որ լուրերը շատ հեռու չգնացին: 30 տարի անց Հովհաննես Մկրտիչը հայտնվեց մարդկանց, սակայն կրոնական իշխանությունները հազար ու մի հարց էին տալիս՝ պարզելու, թե ով էր նա:

Չաքարիայի մարգարեությունը

Պատմությունը լավ ավարտ է ունենում: Չաքարիայի հավատը հավանաբար արագ վերականգնվեց: Նրա դժվարությունը ժամանակավոր բնույթ էր կրում: Երբ նա համը դարձավ, իսկույն գիտակցեց, որ խոսող հրեշտակը Աստծուց էր: Սակայն ինն ամիսների ընթացքում

նա չէր կարողանում արտահայտել իր հավատը Աստծո մեծության հանդեպ: Երբ իր որդին ծնվեց, ու նրա անունը Հովհաննես դրեց, այդ ժամանակ իր լեզուն բացվեց, և սկսեց Աստծուն գովաբանել և մարգարեանալ այն խոսքերով, որոնք ցույց են տալիս, որ նա հասկացել էր Աստծո նպատակները: Նա հասկացավ, որ վաղուց խոստացված Մեսիան գալու է, և որ Հովհաննեսը դառնալու է Նրա ճանապարհը պատրաստողը: Նա խոսեց Աստծո մասին, ով Դավթի տնից փրկության եղջյուր էր բարձրացնելու: Նա համոզված էր, որ իր որդին ուրոշակի դեր էր ունենալու, և գիտեր, որ փրկությունը Աստծուց է:

Չաքարիայի մարգարեությունն ու գովասանքի խոսքերը կարելի է բաժանել երկու մասի: Չաքարիան առաջինը խոսեց եկող Մեսիայի մասին, այնուհետև իր որդու կատարելիք դերի մասին: Նա գովաբանեց Աստծուն Իր խոստումների կատարման համար. Աստված այցելել էր և փրկել Իր ժողովրդին:

Փրկությունը կգա Աստծո ծառա Դավթի տնից: Երեմ. 23.5-ը ասում է. «Ահա օրեր են գալիս, ասում է Տէրը, որ Դավթի համար արդարության շառավիղ կբարձրացնեն, որպես թագավոր կթագավորի ու իմաստությամբ կվարվի ու իրավունք ու արդարություն կկատարի երկրի վրա»: Չաքարիան գովաբանեց Աստծուն իր փրկության և Մեսիային ուղարկելու համար, ով ներում և խաղաղություն է բերում:

Չաքարիան տեսավ իր որդուն՝ որպես Տիրոջ նախակարապետի: Այն մարդը, ով հարցականի տակ էր դնում հրեշտակի պատգամը, այժմ վստահորեն հավատում էր Աստծուն, ով Հովհաննեսին առաջադրանք էր տալու և օգնելու էր դա իրականացնելու գործում: Նա Իսրայել ժողովրդին հոգևորապես պատրաստելու էր գալիք Մեսիային դիմավորելու համար: Նա դա անելու էր՝ ժողովրդին տալով փրկության գիտությունը իրենց մեղքերի թողությանը:

Չնայած Չաքարիան վստահ էր աստվածային այս ծրագրում իր որդու կատարելիք դերի մասին, սակայն հավանական է, որ ո՛չ նա, ո՛չ էլ Եղիսաբեթը այդքան երկար չապրեցին, որ կարողանային տեսնել իրենց որդու ծառայության մեկնարկը: Այդ ծառայությունը սկսվեց Հովհաննեսի հոգևորապես ուժեղանալու և Իսրայելի անապատներում որոշ ժամանակով մեկուսանալուց հետո:

Մեզ համար այսօր

Այս պատմությունը կարևորում է հավատքի կյանքի որոշակի ասպեկտները, որոնք նույնպես կարևոր են բոլորիս համար:

1. Մենք չենք կարող ենթադրել, որ մեր հավատքը բավականաչափ ուժեղ է դժվար իրավիճակները դիմագրավելու համար: Եթե Ջաքարիայի նման աստվածավախ մարդը ձախողվեց, ապա որքան ավելի մենք պետք է ուշադրություն դարձնենք ինքներս մեզ, որ չլինի թե ընկնենք:
2. Մենք կարող ենք երախտապարտ լինել, որ ժամանակավոր անհավատությունը չի խափանում Աստծո խոստումները: Երբ կասկածանքի ժամանակներով ենք անցնում, պետք է դրանք Տիրոջ մոտ բերենք և Նրանից օգնություն խնդրենք, որպեսզի մեզ օգնի՝ տեսնելու այդ դժվարությունների նպատակները մեր կյանքում:
3. Ամենայն հավանականությամբ, մեր հավատքի պակասը կամ անհավատությունը կարող է հանգեցնել որոշ պատիժների կամ գուցե օրհնության պակասի: Մենք չպետք է անհավատությանը թեթևամտորեն վերաբերվենք: Բայց շնորհակալություն ենք հայտնում Աստծուն, որ Նրա խոստացած օրհնությունները, ինչպիսիք են հավիտենական կյանքն ու Սուրբ Հոգու ներբնակությունը, մեզ զանից երբեք չեն վերցվի:
4. Մենք պետք է հարատևենք աղոթքի մեջ: Երբեմն մեր աղոթքները անմիջապես կամ կարճ ժամանակահատվածում պատասխանվում են, ուրիշ ժամանակ կարող ենք սպասել տարիներ, ինչպես սպասեցին Ջաքարիան և Եղիսաբեթը: Մեր սպասելու մեջ Աստված Իր նպատակներն ունի: Մեր գործը Իրեն հավատարիմ մնալն ու շարունակ աղոթելն է:

Դոն Սթորմըր



Հավատո՞ւմ եք Հիսուսին

«Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվեք»: Բոլորս երևի լսել ենք այս արտահայտությունը կամ գուցե անձամբ ենք ասել: Վստահ ենմ, որ կարդացել ենք այն Աստվածաշնչում: Պողոսն ու Շիղան, գրտնըվելով բանտում, բանտապետին նայելով, ասացին. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվեք»: Հովհաննես առաքյալն ասել է. «Ով որ Որդուն ունի, կյանք ունի, իսկ ով Աստծո Որդուն չունի, կյանք չունի»: Հիսուսը Նիկողեմոսին ասել է. «Ով հավատում է Որդուն, հավիտենական կյանքն ունի»:

Սակայն ի՞նչ է նշանակում Տեր Հիսուսին հավատալ: Արդյո՞ք այն հետևյալ նշանակություններից մեկն է.

- Հավատալ, որ Նա գոյություն ունի:
- Հավատալ, որ Նա աշխարհը փոխեց:
- Հավատալ, որ Նա մարգարե է:
- Հավատալ, որ Նա մահացավ:

Արդյո՞ք նույն նշանակությունը կունենար, եթե հետևյալները հարցնեինք.

- Հավատո՞ւմ եք Չմեռ պապին:
- Հավատո՞ւմ եք այլմոլորակայիններին:

Հարցը ավելի ճշգրիտ կերպով կարելի է այսպես ձևակերպել.

- Հավատո՞ւմ եք Հիսուս Քրիստոսին այնպես, ինչպես Աստվածաշունչը ներկայացնում է Նրան: Չեր փրկության հարցը վրտահե՞լ եք Նրան և միմիայն Նրան:

Որպես մարդկային արարածներ՝ յուրաքանչյուրս իր սեփական աշխարհայացք ունի կյանքի, ֆինանսների, հավատալիքների, քաղաքականության, պատմության, փոխհարաբերությունների և այլ բաների վերաբերյալ: Իհարկե, մենք մեր սեփական կարծիքն ունենք նաև հոգևոր հարցերի վերաբերյալ: Բոլորս էլ այդ համոզմունքները ունենք՝

անկախ այն բանից՝ աստվածավախ ենք թե ոչ: Հոգևոր բաների շուրջ մեր համոզմունքները մեր մեջ կարող են գոյացած լինել տարբեր ձևերով: Գուցե դրանք մեր մեջ սերմանվել են փոքր տարիքից, երբ մեր ծնողները, պապերն ու տատերը, ազգականները մեզ փորձել են ճիշտ ճանապարհի վրա կրթել: Դրանք նաև կարող են գոյացած լինել դրպրոցի, ընկերական շրջապատի, կարդացած գրքերի, դիտած հեռուստահաղորդումների և այլնի միջոցով: Կյանքի ընթացքում այս բոլոր աղբյուրները միասին գործեցին և մեր մեջ կերտեցին հոգևոր հարցերի շուրջ մեր սեփական հավատալիքները:

Սակայն մի օր դեմ առ դեմ հանդիպեցինք «Ճշմարտության»՝ Հիսուսի հետ: Այդ պահին հասկացանք, որ հոգևոր հարցերի շուրջ մեր ունեցած աշխարհայացքը ամբողջությամբ ճշմարիտ չէր: Ըստ էության՝ դրանցից որոշները առասպել էին, հեքիաթ, որոշները մասամբ ճիշտ էին, սակայն գերակշռող մասը մարդկային փիլիսոփայությունն ու սխալ կարծիքներ էին: Հետևաբար գիտակցում ենք, որ Հիսուսը ճշմարտությունն է, միակ ճշմարտությունը: Ուստի գիտակցված որոշում ենք կայացնում, որ այսուհետև հավատալու ենք Հիսուսին՝ միակ ճշմարտությանը: Այլևս չենք շարունակելու հավատալ այն ամենին, ինչին հավատում էինք նախկինում: Այլևս չենք հավատալու այն ամենին, ինչը զարգացել էր մեր մեջ և դրսևորել հոգևոր հարցերի շուրջ մեր սեփական աշխարհայացքը, քանի որ հիմա ճանաչում ենք ճշմարտությունը:

Արդյոք գիտե՞ք, թե ինչ է պատահում անձի հետ, երբ նա հավատում է Հիսուսին. ապաշխարություն է տեղի ունենում: Այո՛, անձը ապաշխարում է, քանի որ այլևս չի հավատում այն ամենին, ինչին հավատում էր նախկինում: Նա հրաժարվում է իր նախկին հավատալիքներից և ընդունում է Հիսուսին՝ որպես ճշմարտության: Սա է ապաշխարությունը:

- Այսպիսով, դուք հավատո՞ւմ եք Հիսուսին:
- Հավատո՞ւմ եք, որ Հիսուսն Աստված է՝ մարդկային մարմնի մեջ (Հովհ. 1.14):
- Հավատո՞ւմ եք, որ Հիսուսը խաչի վրա մահացավ՝ պատժվելով ձեր մեղքերի համար (Ա Կորնթ. 15.3, Բ Կորնթ. 5.21), որոնց հա-

մար արժանի էիք Աստծուց հավիտենական բաժանման (Հռոմ. 6.23):

- Հավատո՞ւմ եք, որ Հիսուսի՝ մարդեղացած Աստծո զոհաբերությանը միակ բավարարող վճարն էր ձեր մեղքերի համար (Ա Հովհ. 2.2, Հովհ. 14.6, Գործք 4.12):
- Հավատո՞ւմ եք, որ ոչինչ չեք կարող անել ձեր անձը փրկելու համար (Եփես. 2.8-9):
- Հավատո՞ւմ եք այս ամենին:

Այնուամենայնիվ, դուք պետք է իմանաք, որ Հիսուսի մասին եղած փաստերին հավատալը մետաղադրամի միայն մեկ կողմն է: Աստվածաշնչային հավատքը շատ ավելին է, քան որոշ բաների ճշմարտացիությանը հավատալը: Աստվածաշնչային փրկարար հավատքը այդ փաստերի նկատմամբ վստահություն ու նվիրում է ենթադրում: Դուք վստահո՞ւմ եք, որ Հիսուսը ձեր Փրկիչն է: Ապավինո՞ւմ եք Նրա քաղաքար մահվանը՝ որպես ձեր մեղքի պարտքի ամբողջական փոխհատուցման: Վստահո՞ւմ եք Նրա հարությանը՝ որպես երաշխիքի, որ մահից հետո դուք նույնպես հարություն եք առնելու՝ Նրա հետ հավիտյան ապրելու համար, թե՞ այս բաներին հավատալու հետ մեկտեղ ձեր փրկության համար ապավինում եք նաև ուրիշ բաների:

Եթե հասկանաք և հավատաք, թե Աստվածաշունչը Տեր Հիսուսի մասին ինչ է սովորեցնում, և վստահեք այդ ճշմարտություններին՝ որպես փրկության հիմքի, ապա կփրկվեք: Այդպես անելով՝ դուք Հիսուսին հավատացած կլինեք այնպես, ինչպես Աստվածաշունչն է գործածում «Հիսուսին հավատալ» արտահայտությունը: Այնուամենայնիվ, եթե մինչ օրս Հիսուսին՝ չեք վստահել՝ որպես Փրկիչ, և փափագում եք վրստահել Նրան փրկության համար, ապա ձեր բռնեղով ասե՛ք Նրան այդ ամենը: Աստվածաշունչը հստակ բացատրում է, որ եթե անձը իր սրտում հավատա և բերանով դավանի, կփրկվի (Հռոմ. 10.9-10):

Հովիվ՝ Բաֆֆի Չափարյան

Եբրայեցիներին ուղղված նամակ **(բաժին 2, մաս 4)**

Սրանից հետո օրհնանքի խոսքեր են ասվում: Դրանք խաղաղության, հավերժական Ուխտի և Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելու մասին են: Հին ուխտը իր բնույթով ժամանակավոր էր և չէր կարող մնալուն խաղաղություն տալ, ոչ էլ կարող էր մեղքերի համար իրական մաքրություն առաջարկել: Հաշվի առնելով Քրիստոսի կատարած հսկայական աշխատանքը՝ հեղինակը աղոթում է ընթերցողների համար՝ ասելով. «Արդ, խաղաղության Աստվածը, որ մեռելներից հարուցանեց մեր Տեր Հիսուսին՝ հավիտենական Ուխտի արյան շնորհիվ հոտի Մեծ Հովվին, թող ձեր մեջ հաստատի ամեն մի բարի գործ՝ Իր կամքը կատարելու համար, ներգործելով ձեր մեջ այն, ինչ Իր առջև հաճելի է Հիսուս Քրիստոսի միջոցով, ում փառք հավիտյանս հավիտենից: Ամեն» (Եբր. 13.20-21):

Նամակը ավարտվում է վերջնական հորդորով՝ Տիմոթեոսի բանտից ազատվելու և նրանց երկուսի՝ եբրայեցի քրիստոնյաներին այցելելու հույսի լուրերով: Հեղինակն ու նրա հետ եղողները, ինչպես նաև Իտալիայի քրիստոնյաներն իրենց ողջույնները փոխանցում են առաջնորդներին և Աստծո բոլոր սրբերին: Այնուհետև նա ավելացնում է օրհնանքի վերջին խոսքերը, մի խոսք, որը կարող էր ասվել միայն Նոր Ուխտի բերած արտոնության շնորհիվ. «Շնորհ ձեզ բոլորիդ» (Եբր. 13.25):

7. Կրկնություն

Եբրայեցիներին ուղղված նամակը մեծ նշանակություն ունի, հատկապես նրա համար, որ այն Հիսուս Քրիստոսի մասին հետաքրքիր ճշմարտություններ է բացահայտում մեզ: Դա ավելին է, քան սովորական նամակը: Մեր սրտերը պետք է ուրախությունից ցնծան, երբ կարդում ենք նման խոսքեր. «Մեր ասածների բովանդակությունն այս է. մենք ունենք այնպիսի մի Քահանայապետ, որ երկնքում Գերազանցության գահի աջ կողմում է նստած» (Եբր. 8.1), և «Ոչ թե ճշմտարիտի

ընդօրինակությունը եղող ձեռագործ սրբարանը մտավ, այլ՝ բուն երկինքը, որպեսզի հիմա Աստծո առջև ներկայանա մեզ համար» (Եբր. 9.24) և «Նա հայտնվելու է երկրորդ անգամ, առանց մեղքի, փրկության համար» (Եբր. 9.28):

Եթե մենք Աստծո կամքին հնազանդ կյանք ենք ապրում, չպետք է վախենանք Նրա դատաստանից: Մենք կարող ենք վստահորեն սպասել՝ ստանալու այն, ինչ Նա խոստացել է մեզ (Եբր. 10.36): Եվ մենք կարող ենք շնորհակալ լինել և Աստծուն երկրպագել, քանի որ գիտենք, որ շուտով մտնելու ենք Երկնային քաղաքություն (Եբր. 12.28):

Լավ կանենք, եթե ուսումնասիրենք Հին Կտակարանի Աստծո հավատարիմ մարդկանց կյանքը և նմանվենք նրանց: Նրանցից շուրջ 17-ի անունները արձանագրված են Եբր. 11-րդ գլխում:

Վերջին երկու գլուխները պարունակում են շատ գործնական հորդորներ: Ահա մի քանիսը.

1. Դե՛ն նետենք ամեն մի ծանրություն (12.1):
2. Համբերատարությա՛նք վազենք մեր առջև դրված մրցավազքը (12.1):
3. Հիսուսի՛ն նայինք (12.2):
4. Շնորհակա՛լ լինենք և Աստծուն երկրպագենք (12.28):
5. Եկե՛ք Իր մոտ գնանք քանակից դուրս (13.13):
6. Շարունակ օրհնության պատարա՛գ մատուցենք Աստծուն (13.15):

Թեև այսօր հուդայականությունը աշխարհում տիրող կրոն չէ, սակայն եկեղեցում կամ այսպես ասած քրիստոնեական միջավայրերում, հուդայականությունից քրիստոնեությանը անցած որոշ ծեսեր կան, որոնք իրականում չպետք է լինեին: Սա Աստծո կողմից երբեք չէր նախատեսված, և առաքյալները դա չէին սովորեցնում: Մենք մարդկանց մեջ քահանայապետ այլևս չենք որոնում, քանի որ Տեր Հիսուսն է մեր քահանայապետը: Մենք մարդկանց միջնորդ/բարեխոս չենք փնտրում, քանի որ Տեր Հիսուսն է մեր միջնորդը/բարեխոսը (Ա

Տիմ. 2.5): Երբ Տեր Հիսուսը մահացավ, տաճարի վարագույրը երկուսի պատռվեց, և քրիստոնյաները՝ որպես քահանաներ, այժմ կարող են Աստծուն մոտենալ (Մատթ. 27.60, Եբր. 10.22, 4.16): Սա նաև նշանակում է, որ այլևս կարիք չունենք զոհասեղանների, խունկի սեղանի և այլնի: Այժմ քանի որ Հիսուսը եկավ, Իրեն զոհ մատուցեց ու վերադարձավ՝ ծառայելու սրբավայրում՝ ճշմարիտ խորանում (Եբր. 8.1-2). Նա է դառնում մեր մեկտեղ հավաքվելու առանցքային Անձը:

QMBC պանորամա

Ջիմին և անաստվածը

Ջիմին մի որբ տղա էր, որ իր անձնասեր հորաքրոջ խնամքին էր հանձնվել: Մի գիշեր իրենց փայտից պատրաստված տնակը սկսեց այրվել: Երբ հարևանները ջանում էին կրակը մարել, Ջիմին արթնացավ և սկսեց պատուհանից օգնություն կանչել: Մարդիկ լսեցին ու տեսան, սակայն անգամ մեկը չհամարձակվեց մոտենալ վառվող տանը: Մինչ ժողովուրդը շվարած նայում էր, մի մարդ, ջրի խողովակով մագլցելով, գրկեց սարսափահար փոքրիկին և ազատեց նրան կրակից: Այդ մարդուն ճանաչում էին որպես անհավատի:

Թեև Ջիմին ազատվեց, բայց հորաքույրը մահացավ: Այդ շրջանի հովիվն իր մոտ վերցրեց որբ տղային և հայտարարեց, թե ով որ ցանկանում է որդեգրել նրան, թող որևէ օր իր տուն գա: Շատերը ցանկություն հայտնեցին այս յոթնամյա տղային որդեգրելու: Նրանցից էին հավատացյալ անգավակ մի զույգ: Մինչ տիկին Մարշը խոսում էր Ջիմիի հետ, անաստված մարդն եկավ ու իր ձեռքին փաթաթածը քանդելով՝ ասաց.

- Չե՞ս ցանկանա իմ գավակը լինել:

Սա լսելով Ջիմին փաթաթվեց այդ մարդուն և ասաց.

- Այո՛, ուզում եմ քեզ հետ գալ, քանի որ քո ձեռքերն ինձ համար այրեցիր:

Մարդը շատ լավ հոգ էր տանում Ջիմիի համար: Բայց Աստծո մասին ոչ մի բան չէին խոսում իրենց տան մեջ:

Մի օր հայր և որդի գնացել էին նկարչության ցուցահանդեսի, որտեղ տեսան արվեստի հոյակապ գծագրություններ, մինչև որ մի արտասովոր նկար գրավեց Ջիմիի ուշադրությունը:

- Ինչո՞ւ է այս մարդու ձեռքերի և ոտքերի վրա գամեր կան,- հարցրեց զարմանքով:

Անհավատը չէր ցանկանում պատասխանել, բայց երբ տղան պընդեց՝ ասաց.

- Թեև ես չեմ հավատում, բայց լսել եմ, որ մոտ 2000 տարի առաջ Հիսուս կոչված այս մարդուն դատապարտեցին և խաչի վրա գամեցին:

Ջիմին հուզմունքով նայեց Հիսուսի արյունվա դեմքին և ասաց.

- Հայրի՛կ, այս մարդու վիրավորված ձեռքերն ինձ հիշեցնում են քո այրված ձեռքերը և ինձ ազատելու համար քաշած տառապանքը:

Տղայի խոսքերն անաստված մարդու սիրտը խոցեցին, և այդ գիշեր նա չկարողացավ քնել: Հիշեց մանկության տարիներին Աստծո Խոսքից սովորած համարները և մտածեց, որ ինչ ցավալի պիտի լինի, եթե Ջիմին անտեսեր իր այրված ձեռքերը և չցանկանար իր զավակը լինել: Նույն ժամանակ Աստված հայտնեց իրեն, որ Հիսուսը խաչվեց իր մեղքերի համար, և որ ինքը դեռ մերժում է Նրան հավատալ: Ուստի Սուրբ Հոգիի ներգործությամբ ծունկի եկավ մահճակալի մոտ և Հիսուս Քրիստոսին ընդունեց որպես իր անձնական Տեր և Փրկիչ:

Արդյոք դու էլ չե՞ս ցանկանում Խաչյալ Քրիստոսի առջև գալ և ընդունել Նրան քո սրտի մեջ: Հիշի՛ր, որ Հիսուսն աշխարհ եկավ քեզ և ինձ մեր մեղքերից փրկելու համար:

«Սակայն մեր մեղքերի համար Նա վիրավորվեց և մեր անօրենությունների համար ճգմվեց, մեր խաղաղության պատիժը նրա վրա եկավ, և նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.5):

Քաղված՝ «Օրհնաբեր նունեմին» գրքից

Բարի լուր

**«Ինչպես սառը ջուրն է ծարաված մարդու համար,
այնպես է հեռու երկրից եկած բարի լուրը» (Առակ. 25.25)**

Մարդիկ միշտ լուրերի են սպասում, ուզում են լուրեր լսել, թեև դրանք վատը լինեն: Նաև ուզում են լավ և ուրախալի լուրեր լսել ու այդ բարի լուրերը ուրիշներին էլ հաղորդել:

Երբ գերիին կամ բանտարկյալին, հատկապես նրան, ով դատապարտված է մահվան, լուր է գալիս այն մասին, թե ինքը ազատ է արձակվելու, որքա՞ն մեծ ուրախություն է ապրում նա:

Ավելի մեծ, ուրախալի ու բարի է Ավետարանի լուրը: Մարդը մահվան է դատապարտված, որովհետև կոտրել է արդար Աստծո օրենքը: «Մարդկանց համար սահմանված է մեկ անգամ մեռնել և որից հետո՝ դատաստան», - ասում է Աստվածաշունչը: Դու կարող ես ասել. «Ես անպարտ եմ դուրս գալու Աստծո դատաստանից, ես մեղք չունեմ»: Յուրաքանչյուր մարդ մեղավոր է, Աստվածաշունչն ասում է. «Ամեն մարդ դատապարտության տակ է»: Բայց սա է բարի լուրը մարդկության համար, որ Տեր Հիսուսը մեր դատապարտությունը ու մեր մեղքերի պատիժը Իր վրա վերցրեց ու մեզ համար պատժվեց: Եթե ընդունես Նրան՝ որպես քո փոխանորդի, ով քեզ համար Աստծո պատիժը վերցրեց, հավիտյան ազատ կլինես Աստծո դատապարտությունից: Լսի՛ր, թե ինչ է ասում Աստծո Խոսքը. «Հետևաբար, հիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են, ովքեր մարմնապես չեն քայլում, այլ՝ ըստ Հոգու» (Հռոմ. 8.1): Հիսուսն ասել է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով լսում է Իմ խոսքը և հավատում Նրան, որ Ինձ ուղարկեց, հավիտենական կյանք ունի և դատապարտության պիտի չգա, այլ՝ մահից կյանքի է անցել» (Հովհ. 5.24):

Երբ հացի կարոտ մի աղքատի բարի լուր գա այն մասին, որ իրեն մեծ գումար ժառանգություն է շնորհվել, կամ թագավորը պալատի պես տուն ու հարստություն է տվել իրեն, որքա՞ն մեծ ուրախություն

կունենա: Սակայն ավելի մեծ ուրախություն է Ավետարանի բարի լուրը՝ մեղավորին: Աստծո Խոսքն ասում է, որ մարդը մեղավոր է ու աղքատ: Ձրի փրկություն, մեղքերի թողություն, երկնային բնակարաններ, հավիտենական ժառանգություն է շնորհում Աստված մեղավորին: Աստծո Խոսքն ասում է. «Բայց որոնք ընդունեցին Իրեն, նրանց Նա Աստծո որդիներ դառնալու գործություն տվեց, նրանց, որ կհավատան Իր անվանը» (Հովհ. 1.12): Բայց ով չընդունի Տեր Հիսուսին՝ որպես անձնական Փրկչի, դարձի չգա ու չխոստովանի իր մեղքերը Աստծուն, որքան էլ հարուստ լինի այս կյանքում, դժոխքի բոցերի ու տանջանքի մեջ մի կաթիլ ջուր է պաղատելու այն հարուստի նման ու չի ստանալու:

Ինչպես անբուժելի հիվանդությամբ տառապող հուսահատ հիվանդի եթե ասեն, թե լիովին ազատվելու է այդ հիվանդությունից, կուրախանա, այնպես ու էլ ավելի մեծ ուրախություն է Ավետարանի բարի լուրը՝ մեղքի հիվանդությամբ տառապող մեղավորին: Մեղավորը մեղքի հիվանդությամբ է վարակված: Աշխարհի բժիշկները, դեղերը ու միջոցները չեն կարող ազատել նրան այս հիվանդությունից: Բայց լսի՛ր Ավետարանի բարի լուրը: Քրիստոսն է բարի բժիշկը. միայն Նա կարող է փրկել քեզ մեղքի աղտից ու հիվանդությունից:

Մեր բնաբանը ասում է. «Ինչպես սառը ջուրն է ծարաված մարդու համար, այնպես է հեռու երկրից եկած բարի լուրը»: Մարդու հոգին ծարավ է. աշխարհի հաճույքները չեն կարող հագեցնել մարդու հոգին: Տեր Հիսուսը սամարացի կնոջն ասաց. «Ով այս ջրից խմի, նորից կծարավի, բայց ով խմի այն ջրից, որ Ես նրան պիտի տամ, երբեք չպիտի ծարավի: Այլ այն ջուրը, որ Ե՛ս եմ տալու նրան, նրա մեջ ջրի աղբյուր կլինի՝ հավիտենական կյանքի համար բխող» (Հովհ. 4.13-14): Եթե չխմես Կենաց ջրից այս կյանքում, դժոխքում աղաղակելու ես մի կաթիլ ջրի համար ու չի տրվելու քեզ:

Խմի՛ր Կենաց ջրից, քանի դեռ առիթ ունես հիմա:

Խ. Գասպարյան



Հոգևոր տնտեսագիտության դասեր մանուկների և պատանիների հետ աշխատողների համար (5)

«Մի՛ խաբվեք, Աստված չի ծաղրվի, որովհետև, մարդ ինչ որ ցանում է, այն էլ պիտի հնձի: Իր մարմնի համար ցանողն իր մարմնից ապականություն կհնձի, իսկ Հոգու համար ցանողը՝ Հոգուց հավիտենական կյանք կհնձի: Եկե՛ք բարին գործելուց չհոգենք, որովհետև իր ժամանակին պիտի հնձենք, եթե չթուլանանք» (Գաղ. 6.7-9):

Ինչպե՞ս է պետք ներդնել: Վեց բառ պետք է նկարագրի մեր «ներդրումային ծրագիրը»:

Պետք է ներդնենք անձնագոհաբար

Երբ բիզնեսմենը գումար է ներդնում, ուղղում է ապագա նախագծի: Ներդրումը միշտ ներառում է գոհաբերություն: Նշանակում է, որ մեր ռեսուրսները՝ ժամանակը, աշխատանքը, գումարը ներկա կարիքները հոգալու համար ծախսելու փոխարեն նվիրաբերում ենք այլ կարիքների համար:

Պետք է ներդնենք իմաստությամբ

Բիզնեսմենը լավ մտածում է, թե որտեղ է ուզում ներդնել իր գումարը: Նա պետք է համոզված լինի, որ լավ հասույթ կստանա: Ուստի մինչև որոշում կայացնելը քննում է բոլոր հնարավորություններն ու տարբերակները:

Ես ու դու պետք է իմաստուն լինենք մեր ժամանակը, գումարն ու աշխատանքը ներդնելիս: Պետք է քննենք ու որոշենք մեր ներդրման լավագույն տեղը ու հաշվի առնենք «հասույթի» հարցը. «Իմ ներդրումը որտեղ ամենաեկամտաբերը կլինի, նաև կփառավորի և կուրախացնի իմ Փրկչին»: Նաև պետք է Աստծուց անհրաժեշտ իմաստություն խնդրենք ճիշտ ներդրում կատարելու համար (Հակ. 1.5):

Պետք է ներդնենք մեծահոգաբար

Գործարարը գիտի, որ որքան շատ ներդնի, այնքան շատ կստանա: Հասույթը կախված է ներդրման չափից: Նույն սկզբունքը վերաբերում է քրիստոնյա գործիչներին: Հնձում ենք այն, ինչ ցանում ենք: Որքան շատ ներդնենք, այնքան մեծ կլինի մեր հասույթը: Քրիստոնյա ներդրողը հողագործի պես է, ով բերքի որոշ մաս մի կողմ է դնում, որ ցանի հաջորդ տարի: Որքան շատ է ցանում, այնքան շատ բերք է ստանում: Մեծահոգաբար ներդնելու այս սկզբունքը վերաբերում է ոչ միայն փողին, այլ ավելի շատ ժամանակի, սիրո ու հոգածության ներդրմանը ու հատկապես՝ մեզ ներդնելուն:

«Նա, ով լավով է գնում՝ թանկագին սերմը տանելով, անկասկած ցնծալով է վերադառնալու՝ իր խրճերը բերելով» (Մաթ. 126.6):

Ներդրում կատարող գործարարը լավ հասույթ է ակնկալում ու անհամբեր սպասում: Ներկա գոհաբերության հետ մեկտեղ նա ուրախ ու գոհունակ է, որովհետև գիտի, որ ապագայում կստանա իր գոհաբերության վարձքը: Նմանապես՝ ներդրումը չպետք է վախեցնի կամ ետ մղի քրիստոնյա գործիչին: Մենք ուրախությամբ ենք ներդնում ապագայի հեռանկարով ու Աստծո օրհնությամբ պայմանավորված. «Ավելի երանելի է տալը, քան՝ ստանալը» (Գործք 20.35բ):

Պետք է ներդնենք իրատեսորեն

Ակնկալող գործարարը մասն իրատես լինելու կարիք ունի և պետք է հիշի, որ թեպետ այդ որոշումը հնարավորինս խելամտորեն ու իմաստությամբ է կատարել, բայց ոչ ամեն ներդրում է հաջող ավարտ ունենում: Քրիստոնյա գործիչն ու առաջնորդը պետք է իմաստուն լինի իրեն ու իր ունեցածը ներդնելու հարցում: Բայց մասն պետք է գիտակցի, որ իր ներդրումը կարող է ձախողվել: Ինչևէ, դա չպետք է նրան ընկճի կամ պարտության մատնի:

Պետք է ներդնենք համբերությամբ

Ներդրում կատարող գործարարը հասույթն այսօր կամ վաղը չի սպասում: Դա ապագայի հարց է: Հավիտենության մեջ կտեսնենք մեր ներդրումների արդյունքներից որոշները: Ուստի, քրիստոնեական ծա-

ռայության մեջ մեր «հասույթը» սովորաբար անմիջապես չի գալիս: Պետք է համբերությամբ զինվենք ու չհանձնվենք:

Ե՞րբ պետք է ներդնենք

Ներդրման ժամանակը ՀԻՄԱ է: Մի՛ սպասիր: Փնտրի՛ր ներդրման հնարավորություններ ու ԱՌԱՋ ԸՆԹԱՑԻՐ ԱՅՍՕՐ:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Երեմիա՝ վարանող մարգարեն

Երեմ. 1.1-10 (հատկապես 7-րդ համարը)

1. Երեմիան՝ քահանայից մարգարե (1-ին հմբ)

Ենթադրվում էր, որ Երեմիան քահանա էր դառնալու: Քահանա լինելու մեջ կայունություն կար: Աստված Երեմիային կանչեց մարգարե լինելու ավելի անորոշ գործի մեջ: Մարդկանց՝ վարքով փոխվելու կոչից նա անցավ նրանց կարծրացած սրտերը փոխելուն: Սրտեր փոխելու մարգարե էր: «Միրտ» բառն օգտագործված է 66 անգամ: Երբեմն շատ վտանգավոր ու դժվար է Աստծո Խոսքից խոսելը: Այսօր բազմաթիվ եկեղեցիներ Աստծո Խոսքը չեն քարոզում, որովհետև դա մարդկանց դժվարին կացության մեջ է դնում: Մարդիկ ուզում են լսել քարոզներ Աստծո սիրո մասին, կամ թե Աստված ինչպես է պատրաստվում օրհնել իրենց:

2. Դաժան ժամանակներ էին (2-3-րդ համարներ)

Երեմիան ծնվել էր Մանասեի թագավորության օրոք: Կռապաշտությունն ու մանկանց զոհաբերությունը տարածված էր Երեմիայի մանկության օրերում: Կռապաշտությունը՝ որպես կրոն, ծաղկում էր: Մանասեի թագավորության օրոք Աստծո Խոսքը կորել էր: Քահանաներին անարգում էին: Հովսիա թագավորի օրերում բարեփոխում եղավ, սակայն ոչ ճշմարիտ ապաշխարություն: 3.10-ի համաձայն՝

դա բարեփոխում էր, որ սրտին չհասավ: Շատ ավելի դյուրին է փոխել արտաքին տեսքը, քան սիրտը: Աստված ետ չդարձավ Հուդայի դեմ բորբոքված Իր դատաստանից (Դ. Թագ. 23.26-27): Սովի, ծանր հարկերի ու հոգևոր քաղցի ժամանակներ էին: Երաշտի ժամանակ էր, որի պատճառն անհնազանդությունն էր: Այս ժամանակ էր, որ Աստված Երեմիային կանչեց հավատարմորեն ու անասան քարոզելու Խոսքը, չնայած ժողովուրդը չէր արձագանքում և անգամ ցանկանում էր սպանել նրան: Նա պետք է իր ուժն Աստծուց քաղեր և հավատարիմ մնար:

3. Վարան սրտով (4-10-րդ համարներ)

Մովսեսի պես Երեմիան էլ սկզբում վարանեց ձեռնամուխ լինել այս գործին (տե՛ս՝ Մովսեսին Ելից 3.11, 4.11): Գուցե հանձնարարությունը նրան չափազանց դժվար էր թվում: Կամ գուցե մտածում էր, թե իրեն ինչպես կընդունեն, կամ մտածում էր, որ իրեն կսպանեն: Նա վարանում էր, որովհետև ամենայն հավանականությամբ իրեն անհամապատասխան էր զգում այդ գործի համար: Պողոսը Բ Կորնթ. 2.16-ում կարծես ասում է, որ ևս անհամապատասխան է զգում իրեն, բայց նա նաև գիտի, որ իր համապատասխանությունը Տիրոջից էր գալիս:

Այս հատվածում Աստված Երեմիային 3 բան է հավաստիացնում.

- 1. Այս պաշտոնում նրա ընտրությունը:** Աստված էր ընտրել նրան, ոչ հակառակը: Մինչ նա կիմանար Աստծո մասին կամ կյանքում որևէ բան, Աստված տեսել էր նրան և կանչել, ու զինում էր այս դժվարին գործի համար:
- 2. Նրա պաշտպանությունը:** Մի քանի անգամ Երեմիան քիչ էր մնում զոհվել հանուն իր հավատքի: Ոմանք կամենում էին սպանել Երեմիային: Երեմիան ապրեց ի հեճուկս դրա, քանզի Աստված նրա վահանն էր:
- 3. Նրա իշխանությունը:** Աստված նրան Իր Խոսքը տվեց: Երեմիան սեփական կարծիքը կամ մտքերը չէր քարոզելու, այլ Աստծո Խոսքը: Այս Խոսքը գորություն ունի և դատարկ ետ չի գալիս: Այսօր շատ հաճախ մարդիկ ճանաչման են ձգտում և փոխզիջման ենթարկում, վարկաբեկում Աստծո Խոսքը: Երեմիան առանց դրժ-

վարության կարող էր այդպես վարվել, սակայն չարեց: Նա մարդկանց չէր ասում միայն այն, ինչ նրանք ցանկանում էին լսել:

Դոկտ. Չեսլով Բասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

Ներգրավվածությանը չենք կարող խաբել Աստծուն (Մատթ. 6.1-6, 23.13-18)

Բազմաթիվ կրոնական գործողությունների մեջ ներգրավված լինելը տպավորություն է թողնում մարդկանց վրա, սակայն մենք չենք կարող դրանով խաբել Աստծուն և թաքցնել հավատի ու ծառայության մեջ մեր ունեցած իրական նկարագիրը: Փարիսեցիներն իրենց խաղով ու կեղծավորությանը չկարողացան խաբել Քրիստոսին: Մատթ. 23.13-18-ում երևում է, թե ինչպես է Քրիստոսը նրանց մերժում:

Նա նրանց կեղծավոր է անվանում: Այլ կերպ ասած՝ նրանք թատրոնի դերասանների նման տարբեր դերեր էին փոխում: Դերը փոխելու համար ընդամենը դիմակն էին փոխում: Նրանք ներկայացում էին բեմադրում համայնքի ծափահարությանն արժանանալու համար: Նրանց չէր հետաքրքրում, թե ինչ կա իրենց ներսում:

Տեր Հիսուսը մեզ զգուշացնում է չնմանվել փարիսեցիներին, ովքեր իրենց կրոնական պարտականությունները կատարում էին մարդկանց աչքին լավը երևալու համար (Մատթ. 6.1-6):

Անշուշտ, եթե մենք զբաղված լինենք եկեղեցական գործերով, անկեղծ կրոնավորի տպավորություն կթողնենք: Սակայն Աստված գիտի՝ մեր դավանությունը բեմադրություն¹ն է, թե՞ իսկական նվիրում: Մենք չենք կարող մեր դիմակներով ու դերերով տպավորություն թողնել Աստծո վրա:

Հիսուսը բոլոր մեղքերից առավել դատապարտեց կեղծավորությու-

նը, հատկապես իր օրերի կրոնական առաջնորդների անամոթ ու անզղջում կեղծավորությունը: Կրոնական կեղծավորները սրբություն չունեցող դերասաններ էին, ովքեր փորձում էին խաբել մարդկանց, բայց Աստծուն չէին կարող խաբել:

Արդյոք դու եկեղեցի հաճախող կրոնավոր՞ես եւ հավիտենական կյանք ստանալու համար ապավինո՞ւմ ես քո բարի գործերին, թե՞ դու մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերստին ծնված հետևորդն ես: Դու ունե՞ս փրկության վստահություն եւ Քրիստոսին ընդունո՞ւմ ես որպէս քո Փրկչի:

Հիշի՛ր, որ Աստծուն չենք կարող խաբել, եթե նույնիսկ շատ վարպետորեն խաղանք դերը:

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան
Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

«Կան ժամանակներ, երբ մենակությունը ավելի լավ է, քան հասարակության մեջ գտնվելը, լուռ մնալը՝ ավելի իմաստուն, քան խոսելը: Մենք ավելի լավ քրիստոնյաներ կլինեինք, եթե հաճախ առանձնանայինք ու Աստծո խոսքի շուրջ խորհրդածելով՝ սպասեինք Նրան՝ Հոգեւոր ծառայության համար զորություն ստանալու: Մենք պարտավոր ենք մտածել Աստծո բաների մասին, քանի որ այդպիսով կստանանք իրական եւ լիակատար Հոգեւոր սնունդ: Ինչո՞ւ են որոշ քրիստոնյաներ դանդաղ առաջընթաց գրանցում իրենց քրիստոնեական կյանքում, չնայած շատ քարոզներ են լսում: Քանի որ նրանք անտեսում են Աստծո հետ առանձին լինելու պահը եւ Աստծո խոսքի շուրջ խորություն մտնել: Նրանք սիրում են ցորեն, բայց չեն աղում այն, նրանք սիրում են եգիպտացորեն, բայց ծուլանում են դաշտ դուրս գալ եւ հավաքել այն. պտուղը կախված է ծառի վրա, բայց նրանք չեն քաղում այն: Այսպիսի հիմարությունից ազատի՛ր մեզ, Տե՛ր»:

2. Հ. Սպերջեն

Հավատք՝ Քրիստոսի հանդեպ, սեր՝ եղբայրների հանդեպ (2)

Երբ Պետրոսը բանտարկված էր ու պիտի սպանվեր Հերովդեսի կողմից, գրված է, որ եկեղեցին հավաքված աղոթում էր նրա համար: Երևի կասենք, թե Պետրոսը եկեղեցու սյուներից մեկն է. եթե նրա համար չաղոթեին, հապա ո՞ւմ համար աղոթեին, նրա հանդեպ սեր ցույց չտային, հապա ո՞ւմ հանդեպ ցույց տային: Նա Քրիստոսի 12 աշակերտներից մեկն էր: Ի վերջո՝ նա այն անձն էր, ում Հիսուսն ասել էր. «Ես կտամ քեզ երկնքի թագավորության բանալիները, և ինչ որ կապես երկրի վրա՝ պիտի կապվի երկնքում, և ինչ որ երկրի վրա արձակես՝ պիտի արձակվի երկնքում»:

Գործք Առաքելոցում էլ կարդում ենք Եվտիկոս անունով մի երիտասարդի մասին: Ո՞վ էր նա. սովորական երիտասարդ հավատացյալ, որ ամենևին էլ եկեղեցում դիրք չուներ, ոչ էլ հավակնություն, որ հետո ձեռնադրվելու էր Պողոսի կողմից: Նա աննշան մի անձնավորություն էր, այնքան աննշան, որ նույնիսկ նրան հարմար տեղ չէին տվել նըստելու: Պողոսի քարոզը երկարեց. Եվտիկոսը ցած ընկավ: Պողոսի արձագանքը նշանակալի է. նա բեմը թողեց, քարոզը թողեց այդ աննշան հավատացյալի համար... Ինչո՞ւ: Քանի որ սերը հոգատարություն է: Սերը նշանակում է՝ դու նշանակություն ունես ինձ համար, և կարևոր չէ՝ Պետրո՞ս ես, թե՞ Եվտիկոս:

Տերը ասում է՝ իրար արեք, ինչպես որ Ինձ կանեիք:

Մայր Թերեզան, ով օգնում էր հազարավոր որբերի ու կարիքավորների, անկասկած սիրում էր Տեր Հիսուսին: Նրա մեջ նաև վառ արտահայտվում էր սերը մարդկանց նկատմամբ:

Շատ տարիներ առաջ մի եղբայր մի բան խնդրեց, որ անեմ: Այդ աշխատանքը կատարելու համար ինձանից ժամեր էին պահանջվելու: Խնդրանքի վերջում ավելացրեց, որ դա անեմ Տիրոջ համար... Ես արեցի նրա համար, նաև Տիրոջ համար:

Ինչո՞ւ ենք վախենում իրարից բան խնդրել ու խնդրելու ժամանակ անպայման նշում իշխանություն պարունակող խոսքը՝ Տիրոջ համար ես անում... Աստվածաշնչում գրված է. «Ինչ որ անում եք, սրտանց արեք որպես թե Տիրոջը», այսինքն՝ ինչպես որ Տիրոջը կանեիր, այնպե՛ս արա քեզանից խնդրողին...

Պողոսը Փիլիմոնին նամակ գրեց՝ բարեխոսելով Ոնեսիմոսի համար ու որոշ խնդրանքներ հայտնելով:

«Շնորհակալություն եմ հայտնում Աստծուն՝ իմ աղոթքներում միշտ հիշատակելով քեզ, լսելով քո սիրո և հավատի մասին, որ ունես Տեր Հիսուսի և բոլոր սրբերի հանդեպ» (Փլմ. 4, 5): Դարձյալ հանդիպում ենք եղբայրների նկատմամբ սեր ունենալու մասին գրության, ու այդ սերը եղբայրների սրտերը հանգստացնում ու մխիթարում է. դա երևում է 7-րդ համարում, որն ասում է. «Մեծ ուրախություն ու մխիթարություն ունեցանք քո սիրո մասին լսելով, որովհետև սրբերի սրտերը հանգիստ են գտել քեզնով, եղբայր»:

Պողոսը Փիլիմոնին ասում է, որ նրանից մի բան է ուզում խնդրել, բայց կարող է չխնդրել, այլ հրամայել (հմր 8): Հետո նաև նշում է, որ վստահ է, որ Փիլիմոնն իր ասածից ավելին էր անելու (հմր 21): Բայց 17-րդ համարը, որը գլխավոր համարն է, ասում է. «Եթե ինձ սրտակից ես համարում քեզ, ուրեմն ընդունի՛ր նրան, ինչպես ինձ կընդունեիր»։ Կարծես ասում է. «Եթե իմ ու քո միջև ինչ-որ կապ կա, եթե Քրիստոսով եղբայր ենք, իմ խնդրանքը մի՛ մերժիր, արա՛ այս ծառայությունը **ինձ համար**»:

Չհրամայեց, Փիլիմոնի խղճի վրա ազդելու համար շահագործող բաներ չօգտագործեց, չասաց՝ հիշի՛ր, որ ժամանակին դու էլ Տիրոջ համար անպիտան էիր, բայց քեզ ընդունեց, հիմա դու էլ Տիրոջ համար ընդունի՛ր նրան, այլ ասաց. «Եթե ինձ սրտակից ես համարում քեզ, ուրեմն ընդունի՛ր նրան, ինչպես ինձ կընդունեիր»:

Սա է սերը:

Սակայն երբեմն թվում է, թե երբ սիրես բոլորին, բոլորը կսկսեն շահագործել քեզ: Եվ կարծես, թե հերիք չէր այն, որ Պողոսը Ոնեսիմոսի համար խնդրեց, մի խնդրանք էլ ավելացրեց 22-րդ համարում. «Սիա-

Ժամանակ ինձ համար էլ մնալու մի տեղ պատրաստի՛ր, որովհետև հույս ունեմ, թե ձեր աղոթքների շնորհիվ ձեզ պիտի տրվեմ»։ Երբ սիրում ես, պետք է ոչ թե մտածես, որ շահագործված ես, որ քո հնազանդությունը և սերը շահագործվում է, այլ տեսնես, որ մարդիկ քո մեջ մխիթարություն են գտել, ուրախություն են գտել (հմր 7)։

Տեր Հիսուսը դիմացինին սիրելու վերաբերյալ երկու պատվեր թողեց. առաջինը՝ սիրի՛ր դրացուդ քո անձի պես, և եկրորդը՝ սիրի՛ր եղբորդ, ինչպես Ես քեզ սիրեցի։ Դիմացինի համար արա՛ այն, ինչ կուզենայիր, որ նա աներ քեզ, և սիրի՛ր նրան այնպես, ինչպես Հիսուսը սիրեց նրան. կարծում եմ՝ երկրորդն ավելի դժվար է, քան առաջինը։ Այն շատ ավելի դժվար է, քանի որ առաջինում ես կարող եմ մարդկային ուժերով սիրել դիմացինին, բայց երկրորդը կատարելու մեջ ձախողվելու եմ, քանի որ խոսքը աստվածային սիրո մասին է։

Եկե՛ք սեր ցույց տանք դիմացինին, իսկ մեր արածի փառքը, գովասանքը՝ Քրիստոսին։ Մի կանոն կա, որին եթե հետևենք, լավ կանենք. **անելը՝ դիմացինին, արածիդ փառքը՝ Քրիստոսին, արածիդ չափանիշը՝ որպես թե Քրիստոսին** (Կող. 3.17, Կող. 3.23, Ա Կորնթ. 10.31)։

Վարդան Սարգիսյան

«Մի՛ արա մի բան, որ չես ուզենա, որ Աստված տեսնի։ Մի՛ ասա մի խոսք, որ չես ուզենա, որ Աստված լսի։ Մի՛ գրիր մի բան, որ չես ուզենա, որ Աստված կարդա։ Մի՛ գնա մի վայր, որտեղ չես ուզենա, որ Աստված գտնի քեզ։ Մի՛ կարդա մի գիրք, որը չես ուզենա, որ Աստված տեսնի եւ ասի. «Ցո՛ւյց տուր՝ ինչ ես կադրում»։

Ջ. Ս. Ռայլ

«Բերանիս խոսքերն ու սրտիս խորհրդածուլթյունը թող Քո առաջ ընդունելի լինեն, ո՛վ Տեր, իմ զորությո՛ւն ու փրկիչ»։

Սաղմոս 19,14

Որքա՞ն մեծ է քո Աստվածը

Երկու մարդ ձկնորսության էին գնացել: Նրանցից մեկը վարպետ ձկնորս էր, իսկ մյուսը՝ անփորձ: Երբ փորձառու ձկնորսը մեծ ձուկ էր որսում, դնում էր իր փոքր սառնարանի մեջ, որ թարմ մնա: Իսկ երբ անփորձ ձկնորսն էր մեծ ձուկ որսում, ջուրն էր նետում այն:

Վարպետ ձկնորսը ամբողջ օրվա ընթացքում հետևում էր նրա արածներին և վերջապես ձանձրացավ:

- Ինչո՞ւ ես մեծ ձկները որսում և կրկին ծովը նետում, - հարցրեց զարմանքով:

Անփորձ ձկնորսը պատասխանեց.

- Քանի որ միայն փոքր թավա ունեմ:

Թերևս զարմանալի ենք համարում այս ձկնորսի արածը, սակայն մենք էլ, այդ մարդու պես երբեմն նետում ենք մեծ ծրագրերը, հսկայական երազները, մեծ գործերը և բացառիկ առիթները, որ Աստված տալիս է մեզ, քանի որ մեր հավատքը փոքր է: Ծիծաղում ենք այն ձկնորսի վրա, որ չի կարողանում տրամաբանել և ավելի մեծ թավա վերցնել: Արդյոք մենք պատրա՞ստ ենք մեր հավատքը ընդլայնելու Աստծո՞ւ մեզ տված մեծ երազները, գործերը կամ առիթները գործադրելու համար:

Ինչևէ, եկե՛ք գիտակցենք, որ Աստված մեր կարողությունից ավելի մեծ բաներ չի տալիս մեզ: Ուստի վստահությամբ քայլենք և օգտագործենք այն առիթները, որ ամենագետ Աստված դնում է մեր առջև:

«... Լայն բաց քո բերանը, ու Ես այն կլցնեմ» (Սաղ. 81.10):

Քաղված՝ Ռիթարամ Դավթյանի
«Բարեպառու ձիթենին» գրքից